ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- --ի 20-- թվականի №--Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԵԼՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3/6 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Սմարթ» համատիրությունը (այսուհետ՝ Համատիրություն) 2020 թվականի հունիսի 23-ի գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ Երևան քաղաքի Նելսոն Ստեփանյան փողոցի 3/6 հասցեում կառուցված բազմաբնակարան շենքը (այսուհետ՝ Շենք) խմելու ջրի մատակարարմամբ ապահովելու համար կառուցվել է պոմպակայան, որը սեփականության իրավունքով պատկանում է կառուցապատող «Օլիմպ Քնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Կառուցապատող), որի օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով անհատույց հանձնումը Հայաստանի Հանրապետությանը տևական ժամանակ կպահանջի, և խնդրել է Հանձնաժողովի անհատական որոշմամբ թույլ տալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Մատակարար) Շենքի բաժանորդների հետ կնքել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրեր որոշակի ժամկետով, որի ընթացքում պոմպակայանի սպասարկման և շահագործման հետ կապված բոլոր աշխատանքները կկատարի Համատիրությունը,

բ) Շենքի նոր համակարգերի՝ Մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման ուղղված լրացուցիչ նախագծանախահաշվային, շինմոնտաժային և այլ աշխատանքների անհրաժեշտություն չկա,

գ) Մատակարարը, Կառուցապատողը և Համատիրությունը համապատասխան գրություններով հայտնել են, որ չեն առարկում Մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշման 1-ին կետով հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 23-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) Շենքում բնակարանների և տարածքների ջրամատակարարումն ապահովվելու նպատակով դիմող անձանց հետ Կանոնների 22.1, 22.3 և 22.3 կետերով սահմանված ընթացակարգերով կնքվում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №379Ն որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան, բացառությամբ պայմանագրի գործողության ժամկետը սահմանող կետի, իսկ պայմանագրերի գործողության ժամկետ սահմանվում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը՝ առանց երկարաձգման հնարավորության.
   2) մինչև Շենքի նոր համակարգերի սեփականության իրավունքով անհատույց հանձնումը Հայաստանի Հանրապետությանը սահմանազատման կետ է համարվում Մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման կետը, իսկ Շենքի նոր համակարգերի շահագործումը և սպասարկումն իրականացվում է Համատիրության կողմից.
   3) Շենքի բնակարաններում և տարածքներում այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չափումների միասնականության ապահովման սահմանված պահանջներին համապատասխանող և ստուգաչափված առևտրային հաշվառքի սարք տեղակայված լինելու դեպքում Մատակարարը համարակալված հոլոգրաֆիկ կնիքով կնքում է այն, որը կարող է լրացուցիչ կնքել նաև բաժանորդը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մատակարարին, Կառուցապատողին և Համատիրությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- --ի 20--թ.